Իսկ կաթուղիկէի դրան ճակատին՝ որ տաճարի տանեաց վրայ է բացվում, այս արձանագիրը կայ։

«Շնորհօքն Քրիստոսի կառուցաւ սուրբ խորանս անուամբ սուրբ Հրեշտակապետացն և երկնային զօրացն, աղօթիւք և բարեխօսութեամբ սոցա ողորմեա՛ց տէր Աստուած Անտոն և Վլաս[1]) վարդապետացն, մանաւանդ սուրբ ուխտիս աշխատաւորացն, և նուէրք և ընծայ բերողացն և հաւատացելոցն ի Յիսուս Քրիստոս, ի Հայրապետութեան Հայոց Տեառն Եղիազարոյ և ի Կաթուղիկոսութեան Աղուանից Տեառն Սիմէօնի և յառաջնորդութեան Տէր Երեմիային, թվ. ՌՃԼԷ»։ (1686)։

Այս արձանագրի մէջ Ջալալեանցը սխալ է գրել «յաջորդի նորա Տեառն Երեմիայի». որ իսկականն է «յԱռաջնորդութեան Տէր Երեմիային»։

Տաճարին կից են միաբանից սենեակներն սրբատաշ քարով շինած, և վերը ամրոցջ՝ որոց մէկի պատի վրայ գրուած է։

«Ես Գրիգոր վարդապետս գրեցի, ի ՌՃԿ. թվ.»։ (1711)։

Եւ միւս սենեակի պատի վրայ գրուած.

«Յիշատակէ սենեակս Դիարբաքրցի Խաչատուրի որդի Վարդանին»։ (Անթուական)։

---

[1]) Վլաս վարդապետն նաեւ գրքեր է արտագրել, բան հոգեաց գիրք (ՌՃԻ. 1671), ի ցուցակն գրադարանի Ս. Էջմիածնի. հմ. 858. Ցոդ. 1։